

Թրքական լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ վերջերս յայտարարեց, թէ Թուրքիա իր դրացիներէն միայն Հայաստանի հետ խնդիր ունի, «սակայն պարտաւտ է բարեկամային անոր հետ, եթէ ան պարտաւտ է ճանչնալու Թուրքիոյ տարածքին անողջակամութիւնը եւ հրաժարելու հողային իր պահանջներէն»:

Պատասխանելով լրատուամիջոցներու ներկայացուցիչներու այն հարցումին, թէ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ի՞նչ դիրքորոշում ունի Կիլի յայտարարութեան նկատմամբ, արտաքին գործոց նախարարութեան քանդակաւոր Սիւրէն Սիւրէնեան յայտնած է, թէ «Հայաստան միշտ թեր եղած է յարաբերութիւններու բնականոնացման առանց նախապայմաններու, որոնք ծրարէն ներս կարելի է քննարկել բոլոր հարցերը, որոնց շարքին՝ ամէնէն խնդրալարոց հարցերը»:

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ՎԱԿԵՐԱՑՈՒՑ ԸԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԸ

Հ. Յ. Դ. Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը կը հաղորդէ, որ Չորեքշաբթի, 21 Մայիսին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արդարադատութեան յանձնախումբը վաւերացուցած է Հայկական Ցեղասպանութեան բանաձեւը (H. Res. 193), որ ներկայացուած էր Ներկայացուցիչներու Տան անդամներ Ճորճ Ռատտնոփօլի, Ատամ Շիֆօ, Ֆրէնք Փայլոնի եւ Ճո Նոլենպըրկի կողմէ: Արդարադատութեան յանձնախումբի այս վաւերացումէն ետք բանաձեւը պիտի դրուի Ներկայացուցիչներու Տան լիազուածար նիստին՝ քննարկման եւ քուէարկութեան համար:

Այս քայլը պիտի կախեալ է Ներկայացուցիչներու Տան ղեկավարութեան որոշումէն: Բանաձեւին կը զօրակցին աւելի քան 100 քոնկրէտականներ:

Հ. Յ. Դ. Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի տնօրէն Արամ Համբարեան այս առիթով յայտարարեց. «Կ'ուզեմք մեր գնահատանքը յայտնել յանձնախումբի նախագահ Սենսըպրենըրի, նաեւ Քոնկրէթի եւ միւս բոլոր անդամներուն, ինչպէս նաեւ բանաձեւի հեղինակներուն, այս շատ կարեւոր որոշումին համար: Գործելով իբրեւ համայնք մը, որ Ցեղասպանութեան ահաւոր հետեւանքները կը կրէ, պիտի շարունակենք զօրակցել Քոնկրէթին ներս տարուելիք ճիգերուն, որպէսզի ապահովենք օրինագիծին վաւերացումը»:

Արդարադատութեան յանձնախումբի նախագահ Ճէյմս Սենսըպրենըրը նիստին ընթացքին օրակարգի վրայ դնելով բանաձեւը նշած է, թէ Միացեալ Նահանգներու կողմէ ՄԱԿի Ցեղասպանութեան ռախի վաւերացումը (1988) երկիրը կը դնէ բոլոր ցեղասպանութիւնները ճանչնալու պարտաւորութեան տակ եւ կոչ ուղղած է իր պաշտօնակիցներուն՝ թեր քուէարկել բանաձեւին:

Բանաձեւի հովանաւորներէն Ատամ Շիֆօ անդրադառնալով բանաձեւին ընդգծեց Հայկական Ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը եւ յայտարարեց. «Այս մէկը չափազանց կարեւոր քայլ մըն է, ոչ միայն ամերիկացիներէն, այլեւ՝ միջազգային ընտանիքին համար: Վերջապէս, Քոնկրէթը կրնայ գտնուել մէկուկէս միլիոն հայերու ջարդը իբրեւ Ցեղասպանութիւն»:

Թիւն ճանչնալու ճամբուն վրայ»:

Բանաձեւը կը նշէ ՄԱԿի Ցեղասպանութեան ռախի որդեգրելու ամերիկեան որոշումին 15ամեակը եւ կոչ կ'ուղղէ դաս քաղել անցեալի ցեղասպանութիւններէն՝ առաջը առնելու համար նմանօրինակ արարքներու կրկնութեան:

### ԹՐԵԱԿԱՆ ԾԻՂԵՐԸ ԶԱՆՈՒՆԵՑԱՆ


Յանձնախումբի նախարարող օրերուն Ուաշինկթընի մէջ Թուրքիոյ դեսպան Ֆարուք Լոզոզլու եւ թրքական լրատուիչի աշխատանքները զլիաւորող նախկին քոնկրէտական Պոպ Լիվինկսթըն փորձեցին օրէնսդրական այս նախաձեռնութիւնը թրքական ուրացման ծառայեցնել: Անոնք փորձեցին բանաձեւէն ջնջել տալ Հայկական Ցեղասպանութեան մասին ակնարկութիւնները: Անոնք մինչեւ իսկ նամակներ յղեցին Արդարադատութեան յանձնախումբի անդամներուն, ըսելով, որ «Հայկական պնդումները» պատմականօրէն կամ օրինակներու փաստաւորում չեն եւ բանաձեւին որդեգրումը «մեծ յուսախարութիւն եւ դառնութիւն պիտի պատճառէ Թուրքիոյ: Այս մէկը իր կարգին ժխտական հետեւանքներ պիտի ունենայ Ամերիկա - Թուրքիա յարաբերութիւններուն վրայ»:

Իբրեւ հակազդեցութիւն, Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը նամակով մը կէտ առ կէտ ջրեց թուրք դեսպանին նամակին բոլոր պնդումները: Ուաշինկթընի մէջ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան իր կարգին կապ հաստատելով յանձնախումբի անդամներուն հետ հակազդեց թրքական կեղծիքներուն:

Քոնկրէթի աղբիւրներ յայտնեցին, որ Լոզոզլու եւ Լիվինկսթըն հանդիպումներ ունեցած են յանձնախումբի անդամներուն հետ, փորձելով գանոնք համոզել, որ Հայկական Ցեղասպանութեան մասին ակնարկութիւնները ջնջելու բանաձեւէն: Յանձնախումբի նիստին այս իմաստով ոչ մէկ առաջարկ ներկայացուցաւ եւ բանաձեւը նոյնութեամբ եւ միաձայնութեամբ վաւերացուցաւ:

## ՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԱԿԵՐԱՑՈՒՑ ԻՐԱՔԻ ՊԱՏԺԱՄԻՉՈՑՆԵՐԸ ՉՆՁԵԼՈՒ ԲԱՆԱԶԵԸՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՆԹԱՐԿԵՑ ՆԻՍԸ

ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը երէկ վաւերացուց Իրաքի պատժամիջոցները ջնջելու բանաձեւը, ապահովել է տք (բացի Սուրիայէն), բոլոր անդամներուն հաստատութիւնը: Սուրիա պորթի ենթարկեց նիւտը՝ մերժելով բանաձեւին որդեգրումը: Նիւտին ներկայ էր ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ ողջունեց յատկապէս Ֆրանսայի «այո»ն, դիտել տալով որ անիկա դրական քայլ մըն է շիտակ ճամբուն վրայ: Փաուըլ կը խօսէր Փարիզի մէջ, ուր ժամանած էր մասնակցելու ձարտարութեան Ուրթերու խմբակի նախարարական ժողովի մը:



Թեան ենթարկուել է տք, բանաձեւը ցոյց կու տայ, թէ ՄԱԿ վերադարձած է» եւ թէ միջազգային ընտանիքը պիտի վերստանան էր դերակատարութիւնը միջազգային բեմին վրայ: Տր վիլիֆէն անգլացուց, որ բանաձեւը որդեգրել է տք, պէտք է երաշխաւորել, որ ՄԱԿ իր արժանի տեղը գրաւէ Իրաքի տագնապին լուծման ճամբուն վրայ:

Ֆրանսա, Գերմանիա եւ Ռուսիա նիւտէն քանի մը ժամ առաջ պորթակցութիւն յայտնած էին Ապահովութեան խորհուրդին կողմէ որդեգրելիք բանաձեւին, որ կը պահանջէ ջնջել Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմինիք Տր վիլիֆէն ըսաւ, որ գերմանացի եւ ռուս պաշտօնակիցներուն հետ հանդիպումի մը ընթացքին, համաձայնութիւն գոյացած է պորթակցական գնումներու բանաձեւին, որ քանի մը անգամ բարեփոխութիւններու ենթարկուեցաւ: Տր վիլիֆէն ըսաւ, որ չորրորդ բարեփոխու-

թեան կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը:

Բանաձեւը կը պահանջէ ջնջել 1990էն ի վեր գործադրուող պատժամիջոցները, ինչպէս նաեւ՝ Իրաքի մէջ գտնուող ամերիկեան ու բրիտանական ուժերէն կը պահանջէ օժանդակել, որպէսզի շուտով փոխանցուին հանգրուանի կառավարութիւնը մը հաստատուի Իրաքի մէջ:

Ապահովութեան խորհուրդի անդամ Չինաստան եւ ողջունեց բանաձեւին գծով կատարուած փոփոխութիւնները: Արտաքին գործոց նախարարութեան քանթեր ժանկ Զիու ըսաւ, որ երբ բանաձեւը քուէարկուի թեան դրուի Ապահովութեան խորհուրդին մէջ Չինաստան պատրաստ պիտի ըլլայ ի նպաստ անոր քուէարկելու:

Յիշեալ երկիրները պահանջած էին, որ բանաձեւը լայն իրաւատութիւններ տայ ՄԱԿի: Ուաշինկթըն եւ Լոնտոն, որոնք նախապէս համաձայն էին ՄԱԿի դերակատարութիւն տալու, պիշեցան մէջ մասնաւոր պատուիրակի մը բաւական մեծ դերակատարութիւն մ'առաջարկեցին: Անոնք նախապէս կ'ուզէին միայն մարդասիրական աշխատանք վստահել ՄԱԿի: Բարեփոխուած սակայն ՄԱԿ նաեւ քաղաքական դերակատարութիւն պիտի ունենայ:

Միւս կողմէ, Իրաքի պաշտօնատար մը ըսաւ, որ Իրաք պատրաստ է քարիչը արտածելու անմիջապէս որ պատժամիջոցները ջնջուին: Մոհամէտ ժուպուրի ասեց, որ ձեռնարկ նաւահան- Շար.՝ էջ 10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ

#### Հ. Յ. Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԸԱՃԵՆ ԸՄԱՅՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԸՅՏ

#### ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՄԵԱԼ ԵՐԿՐԻՆ ԱՄԵՆԱԳԻՏԱԿԻՑ ԽԱԼԸ

ԿԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ԸՆԿ - ԼԵՒՈՆ ՄԿՐՏԶԵԱՆ

25 Մայիսին կայացող Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութիւններու նախընտրական քարտեզը շահ ծիրէն ներս, Հ. Յ. Դ. ներկայացուցիչներէն քաղկացած պատուիրակութիւններ կը շարունակեն Հայաստանի տարբեր վրէջներու մէջ ժողովուրդին հետ իրենց հանդիպումները:

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար ընկ. Լեւոն Մկրտչեան եւ Հ. Յ. Դ. ներկայացուցիչներ երէկ հանդիպում ունեցան Նոր Հաճոն համայնքի կրթական համակարգի ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումին ընթացքին նշուեցաւ, որ կուսակցութեան գաղափարախօսութեան կրթի կրթութեան մարզին հանդէպ յատուկ ուշադրութիւնը: «Հ. Յ. Դ. տասնամեակներ շարունակ Սփիւռքի մէջ դպրոցներու ճամբով պահպանած է Հայկական հաղթածութիւններն ու Հայ ոգին», նշեցին Հ. Յ. Դ. ներկայացուցիչները:

Լեւոն Մկրտչեան իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ ընտրական թնչուրէն մէջ ուսուցիչները կրցան սկզբունքային կեցուածք որդեգրել եւ կը շարունակեն մնալ ամենագիտակից խաւը: «Ցաւալի է, երբ կազմակերպութիւն մը քանի մը համակարգիչ, գրասեղան կամ գրատախտակ նուիրելով համարձակութիւն ունենայ ստիպելու տուեալ դպրոցի ուսուցչական կազմին եւ սնօրէնին ոչ միայն քուէարկել իրեն, այլեւ անդամագրուել կազմակերպութեան»:

«Ասիկա իսկապէս վերաւորական է մտաւորականութեան համար», շեշտեց Լեւոն Մկրտչեան:

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարն է, որ Հ. Յ. Դ. որ 113ամեայ պատմութիւն ունի, միշտ իր ժողովուրդին հետ եղած է եւ կը հաւատայ, որ Հայրենիքի ամբողջական տարածքին վրայ ի վերջոյ պիտի կերտուի Հայկական անկախ պետականութիւնը:

Լեւոն Մկրտչեան կարեւորութեամբ նշեց, որ այն իտէյալը, որուն Հ. Յ. Դ. տասնամեակներ շարունակ հաւատարիմ եղած է, ուսուցիչները պիտի փորձեն, տրուած ըլլալով որ Թուրքիա անընդհատ կը գործէ եւ յարողութիւններ կ'արձանագրէ տարբեր մարզերու մէջ, իսկ ազգային պետութիւնը կ'առուցէ նաեւ Ազգային հանրապետութիւնը: Հետեւաբար Հայաստանի ներգրաւուած է լուրջ մրցակցութեան մէջ, գորկրանք յաղթահարել միայն մտաւորական յաջողութիւններով:

Լեւոն Մկրտչեան նկատել տուաւ, որ Հ. Յ. Դ. կ'ուզէ տիրական ներկայութիւն ըլլալ Հայաստանի խորհրդարանին մէջ՝ իր ծրագրերը երակայնացնելու համար, աւելցնելով, որ միայն երկրին ներքաղաքական կեանքին մէջ լուրջ դերակատարութիւն ունենալու պարագային Հ. Յ. Դ. կրնայ ներգրուել իր քաղաքական փորձառութիւնն ու միջազգային հեղինակութիւնը:



### ԱԿՆԱՐԿ ԲԱՐԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՌՈՂՁ ՉԵՒԱՒՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Այս օրերուն, հայրենի լրատուադաշտը կ'ողողայ երկու օր ետք կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերող մեկնաբանական յօդուածներով, հետապետական հաստատութիւններու կանխատեսական վարկանիշներու իրար հակասող վերլուծումներով, իշխանաւէտ եւ ընդդիմադիր ուժերու փոխասացական քննադատութիւններով, երգիծական քրոնիկներով եւ քաղաքական գովազդներով:

Մեր հայրենիքի նախընտրական իրավիճակը եւս, ինչպէս այլ ոլորտներ ու բնագիտութիւններ, կ'ապրի որոշ հոլովոյնք մը: Ժողովրդային հանդիպումներու կողքին, հետապետի յայտագիրներուն մեծ բաժիր խլած են քաղաքական գովազդները, ուր թէ՛ համամասնական եւ թէ՛ մեծամասնական ընտրակարգով առաջադրուած կուսակցութիւններ (յատկապէս նորատեղծ եւ քաղաքական կեանքի մէջ շատ կարճատեւ կենսափորձով յատկանշուող) եւ թեկնածուներ իրար կը գերազանցեն ժողովուրդը բարօր կեանքի առաջնորդելու իրենց նախընտրական խոստումներով:

Ասոնց առնթը հայրենի նախընտրական մշակոյթը տակաւ սկսած է յատկանշուիլ նաեւ կրթական հաստատութիւններու համակարգչային օժանդակութիւններով, համերգարշարներով եւ փառատօնային ձեռնարկներով:

Այս բոլորը անբնական պէտք չէ թուի: Ժողովրդավար կարգերով ղեկավարուող որեւէ հասարակարգի նախընտրական իրավիճակը կը յատկանշուի վերջնական միջոցներով: Սակայն, մեր հայրենիքի ընտրական այսօրուան իրադրութիւններուն հետեւողը համընդհանուր այս տեսադաշտին մէջ հապի թէ նկատէ, որ նոյն օրը Հայաստանի ամբողջ ընտրական գոյաւորութեան համար խորհրդարանական ընտրութեան, պիտի կայացնէ ճակատագրական որոշում մը եւս՝ ժողովրդային հանրապետով Հայաստանի ճանապարհութեան Սահմանադրութեան փոփոխութիւնը:

Հայաստանի նախորդ վարչակարգի կողմէ մշակուած ու հանրապետի գրուած Սահմանադրութեան առանցքային կարգ մը խնդիրներուն հիմնովին հակադրուած էր մեր կուսակցութիւնը, որ այժմ կոչ կ'ուղիչ իր համակիր քանգումներուն քուէարկել Սահմանադրութեան բարեփոխում տարբերակին: Մեր կուսակցութեան առնթը, ցաւ ի պիտի թիւ եղաւ թիւը հասարակական այն կայմակերպութիւններուն, որոնք առաջնահերթ կարեւորութեամբ ժողովուրդին ներկայացուցիչ իրենց քաղաքական հայեացքները Սահմանադրական փոփոխութիւններու մասին: Խորհրդարան մտնող գործելու համար կայմակերպութեան ընտրութեան համար, համակարգչային եւ փառատօնային ձեռնարկները խլեցին քարտեզներու յուսարձակներու մեծամասնութիւնը:

Խորհրդարանական ընտրութիւններու եւ Սահմանադրութեան հանրապետի կայացման համատեղումին պուգահեռ պէտք է ընթանալ նաեւ զոյգ թեմաները առնուապէս նոյն կարեւորութեամբ ժողովուրդին ներկայացուցելու քաղաքական կայմակերպութիւններու ընտրարշարի ուսման վարկանիշը:

Նման մտնուած մը վստահաբար անշի նպաստած կ'ըլլար Հայաստանի քաղաքական դաշտի առողջ ձեւաւորման գործընթացին: «Ա»

### ԼԻԲԱՆԱՆ ՄԻՇՏ ԱԼ ՋԱՆԲ ԹԱՓԱԾ Է ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

ԿԸՄԵ ԱՍՐ ՄՈՒՍԱ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա երկվ ժամանեց Լիբանան, ուր դիմաւորուեցաւ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու կողմէ:

Ապու Մուսա այցելեց Քորայթէմ, ուր հանդիպում մը ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ: Քննարկուեցան արաբական եւ միջազգային հարցեր:

Մուսա այցելեց նաեւ նախագահական պալատ, ուր հանդիպում մը ունեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ: Նախագահ Լահուտ շեշտեց, որ կը պահանջէր Արաբական Լիկայի դերակատարութեան, յոյս յայտնելով քարելաւել այդ դերակատարութիւնը՝ արաբական միացեալ քաղաքական ուղիի մը որդեգրումով:

Նախագահ Լահուտ ընդգծեց նաեւ, որ Լիբանան միշտ ալ շարք թափած է արաբական միասնականութեան ամրապնդման համար:

Քննարկուեցան շրջանային իրադարձութիւնները: Մուսա դիտել տուաւ, որ բոլոր կողմերը կը մերժեն Արաբական Լիկան ընդարձակելու գաղափարը եւ աւելցուց, որ շրջանին մէջ կայունութիւնը անկարելի պիտի ըլլայ եւ Միջին Արեւելքի տագնապը պիտի չլուծուի մինչեւ իրաքի կայունացումը եւ պաղեստինեան պետութեան ստեղծումը:

Մուսա այցելեց նաեւ Պուսթրոս պալատ, ուր հանդիպում մը ունեցաւ Օպէյտի հետ:

Օպէյտի ողջունեց Մուսայի Լիբանան այցելութիւնը եւ դրուատեց Լիբանան - Արաբական Լիկա գործակցութիւնը:

Պատասխանելով խաղաղութեան ճամբու քարտէսին մասին հարցումի մը, Մուսա շեշտեց, որ այդ քարտէսը պաղեստինցիներուն ներկայացուած է, իսկ եթէ պաղեստինցիները համաձայն են անոր, մենք պիտի չեն կարծիք յայտնենք, որովհետեւ անկիա կը վերաբերի միայն անոնց:

Միւս կողմէ, Մուսա հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի հետ եւ շնորհատեց հարաւային Լիբանանի պատագրութեան Յրդ տարեդարձը:

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԻՍԵՆ ԿԱՐԶԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ԸՆԴԿՁԱԾ

Նախարարաց խորհուրդը երէկ յետմիջօրէի ժամը 5:30ին, թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը:

Նիստը գլխաւորեց նախագահ Գոր. Էմիլ Լահուտ, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրի: Ժողովին բացակայեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ նախարարներ Քարամ Քարամ եւ Թալալ Արսլան:

Շուրջ չորս ժամ տեւած ժողովի ավարտին տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ կառավարութիւնը սկսած է իր ընթացիկ օրակարգին քննարկումին, սակայն առկախած է զայն՝ վարչապետ Հարիրիի բազմազգաբնույթեան եւ երկար ու լուրջ քննարկումներ պահանջող հարցերուն միջեւ խաչաձեւութեան պատճառով: Ըստ որոշ լրատուական աղբիւրներու, վարչապետ Հարիրի ընդվզած դուրս եկած է ժողովասրահէն ու ըսած՝ թէ ոչ Պէյրութի մէջ, ոչ ալ Լիբանանի ալ չըջաններու մէջ կրնան գործադրուիլ ծրագիրներ:

Օրակարգի վրայ էին Ընկերային Ապահովութեան Ազգային Մատուկին մէջ նշանակումներու հարցեր, մագուլթով բանող վաներու վարորդներուն հատուցման թղթածրարը, բլիթային հեռաձայնի ընկերութիւններու ապագայեան հանցումը, ամբողջ Լիբանանի տարածքին գտնուող կալուածներու հատուցումները թղթածրարը, տեղեկատուութեան օրէնքներուն առնչութեամբ փոփոխութիւններ կատարելու թղթածրարը, կարմիր մագուլթ կանաչ մագուլթով փոխանակելու հաւանականութիւնը եւ այլ հրատապ հարցեր:

### ՅՍՏ ԻՍՐԱՅԷԼԻ

## ԴԷՊԻ ԼԻԲԱՆԱՆ ՉԻՆԱՄԹԵՐՔԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄԸ Է

Իսրայէլի կողմէ հաղորդուած լուրի մը համաձայն, իսրայէլեան ծովուծր երէկ լիբանանեան ջրերուն մէջ կասեցուց նաւ մը գինամթերքով լեցուն եւ զայն առաջնորդեց Հայֆայի նաւահանգիստ:

Ըստ տեղեկութեանց, ծովուծր ձերբակալած է նաեւ Հրզպայի անդամներ:

Միւս կողմէ, իսրայէլեան աղբիւրներ տեղեկացուցին նաեւ, որ ձկնորսական նաւ մը «Ապու Հասան», Եգիպտոսէն հասած է Լիբանան: Նաւուն մէջ գտնուած են պայթուցիկ նիւթեր ու ձեռնառուներ: Իսրայէլեան ծովուծր կասեցուցած է նաւը եւ խուզարկած՝ 18 նաւաստիներ, սակայն լիբանանեան ջրերէն դուրս:

Իսրայէլեան աղբիւրներ նշեցին նաեւ, որ ձերբակալած են Հրզպայի անդամ Մոսաձէտ Ապու Օմարն, որ իր կուսակցութեան առաջնորդութեամբ կը գործէր:

Միւս կողմէ, Հրզպայի տեղեկատուական գրասենեակը հաղորդեց, որ իսրայէլեան ապահովական աղբիւրներու կողմէ հրապարակուած այս լուրերէն ինք երբեք տեղեկ չէ: Գրասենեակը վստահեցուց նաեւ, որ կուսակցութեան ռեւէ անդամ չէ ձերբակալուած:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՆԱԽԱԿԱՎ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց մալուրով բանող վաներու վարորդներու մէկ պատուիրակութիւնը եւ վստահեցուց, որ կարելի է վերջնական լուծում մը գտնել նշան թղթածրարին, վերջնական թղթածրարին, վերջնական թղթածրարին:

●ԵՐԼԿ, Քորայթէմի մէջ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայութեամբ եւ գլխաւորութեամբ կրթութեան ու բարձրագոյն ուս-

ման նախարար Սամիր Շարի, ստորագրուեցաւ համաձայնագիր մը՝ լիբանանեան կառավարութեան եւ Տնտեսական ու Ընկերային Բարգաւաճման Արաբական Մատուկին միջեւ:

Համաձայնագիրին հիմամբ, Տնտեսական եւ Ընկերային Բարգաւաճման Ազգային Մատուկը Լիբանանեան համալսարանին բարգաւաճման ծրագիրներուն տրամադրեց 6 միլիոն քուէթթեան տիրար:

●ՊԵՐԵՔԷԻ մէջ մարտիններու Նաւարայի Պուրոս Սֆէյր պատրիարք երէկ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահան, որուն հետ քննարկեց նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ անոր հանդիպումին արդիւնքները, պանոնք նկատելով դրական:

Սըմահա շեշտեց ընդդիմադիրներուն կողմէ երկխօսութեան դիմելու կարելիութիւնը եւ ըսաւ, որ սուրիական կատարելով գործակցութիւն կալ Պերքէի հետ սրբազնիւ համար գոյութիւն ունեցող վտանգները:

Առողջապահութեան նախարար Սէյման Ֆրենժիէ վստահեցուց, որ պատուութիւնը ցոյց պիտի տայ, թէ Սֆէյր պատրիարքի կեցածքները գիտակից են եւ սուրիացիներուն կողմէ բարձր գնահատուած:

Իր կարգին, նախկին նախարար ժողէֆ Հաշմայեցի Սֆէյր պատրիարքին, որուն հետ քննարկեց տեղական իրադարձութիւնները: Հաշմ կոչ ուղղեց Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի՝ սրբազնիւ եւ անբախդելու լիբանանեան սուրիական յարաբերութիւնները:

Հաշմ յոյս յայտնեց նաեւ, որ նախագահ Լահուտ Պատպույի դռները երկխօսութեան համար բաց կը ձգէ բոլոր լիբանանցիներուն առջեւ:

### ՆՇՄԱՐ

## ԵՐՐ ԿԸ ՊԱԿՍԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՐՈՉԱՐՇԱԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ)

Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութիւններու քարտուղար ժիրէն ներս ուշագրաւ էր ընդհանրապէս համազգային մտածողութեան բացակայութիւնը, որ ըստ ամենայնի դատապարտելի է ու չունի ոչ մէկ արդարացում:

Մտէն հետեւելով կուսակցութեանց ու դաշինքներու քարտուղարին, պատկերասփիւնային գովապոստներուն, ցրուուած պրոչիւրներուն, որմաղդներուն թէ ուղղակի թեկնածուներու կամ ցանկերու ղեկավարներու նախընտրական ելոյթներուն, անմիջապէս կը հաստատենք վերը ըստածը: Երեւելի կուսակցութիւններուն կամ դաշինք - համախորհրուներուն մեծ մասը կը ներկայանայ սահմանափակ ու լրիւ ներհայաստանեան թեմաներու վրայ դնելով իր գրաւը, ինչ որ կը մղէ մեկ անվարան մտածելու, թէ անոնց մտահոգութիւնը ոչ թէ հայութեան ու Հայաստանի վայել խորհրդարանի մը ձեւաւորումն է, այլ՝ նոյն այդ խորհրդարանին մէջ որեւէ ձեւով աթոռի տիրանալու պտու շահադիտական նպատակներ կը հետապնդէ:

Այո՛, արդար է այս հանգրուանին առաջնահերթութիւնը տալ երկրին տնտեսական անուտրական մարտի բարելաման, կաշառակերութեան - կոռուպցիայի դէմ պայքարին, ընկերային մարտի բարեկարգման, հոսիկ՝ ներկայ օրերու կենսական ու անլետաձգելի հարցերուն, բայց ոչ՝ համազգային մտածողութեան հաշուոյն, այլ խօսքով՝ համազգային մեր հիմնահարցերուն մասին առանց տող մը իսկ արտասանելու: Այդ առաջնահերթութիւնները ընդունելի են բոլորին համար հասարակապէս, արդար ու տեղին են անկասկած, սակայն ոչինչ կը խանգարէ, երբ համազգային մեր հարցերը ամէն տեղ ու ամէն առիթի պարզ ենք սեղանին վրայ, արտայայտենք պանոնք ժողովրդային լայն մակարդակի վրայ, իրաքանչիւր հայու մտքի մէջ պանոնք քանդակելով առայեւտ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, օրինակ, իր նախընտրական ծրագիրին մէջ շատ յստակ ձեւաւորած է այս բոլորը: Ներհայաստանեան ներկայ հարցերը դրուած են

առաջին ճակատի վրայ, որովհետեւ իրատապ հարցեր են եւ կը կարօտին արմատական ու հրամայական լուծումներու, սակայն պուզընթացօրէն նոյնքան յստակ ձեւով դրուած, նշում են նաեւ համազգային մտահոգութիւններ, ինչպէս՝ Հայաստան - Սփիւք յարաբերութիւններ, Լեռնային Դարաքաղի տագնապ, Հայ Դատ - Յեղափոխութիւն - եւ մասամբ նորին:

Ահա այս է, որ ընդհանրապէս կը պակսի հայրենի քաղաքական բեմադրութեան վրայ եւ Հ. Յ. Դ. ի կողքին դժբախտաբար մտոյ վրայ կը հաշուրդին համազգային մտածողութեամբ հանդէս եկող կուսակցութիւններն ու դաշինքները:

Ի վերջոյ ո՞ր պիտի արժարժունի համազգային մեր հիմնահարցերը, մտահոգութիւնները, եթէ ոչ խորհրդարանին մէջ: Խորհրդարանն (Ազգային Ժողով) է, որ իբրեւ օրէնսդրական իշխանութիւն պիտի բանաձեւէ Հայ Դատի վախճանական նպատակները, նոյն խորհրդարանն է, որ ի վերջոյ մարմին պիտի տայ այդ սրբապէս նպատակներուն:

Ահա թէ ինչն է Հ. Յ. Դ. իր նախընտրական ծրագիրին մէջ հանգամանօրէն տեղ տուած է համազգային մեր հիմնահարցերուն ու իտեղայններուն, միաժամանակ յարգելով նաեւ առաջնահերթութիւններն ու իր իսկ որդեգրած հանգրուանային լուծման մարտավարութիւնը:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

### ՆՈՐ ՄԱՐԱՇԻ ՍՐՔՈՑ ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՅՈՒՅ ՄԵՉ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՍԱՐԳՍԻԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԵՐՈՒՆ

Կիրակի, 25 Մայիսին, Հայաստանի Անկախութեան (1918) տարեդարձին առիթով, Նոր Մարաշի Սրբոց Զառամանց Սանկանց եկեղեցւոյ մէջ Ս. եւ Աննաի պատարագին պիտի հանդիսապետէ եւ քարոզէ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ** (Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Յաւարտ Ս. պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Հայաստանի Անկախութեան համար գոհուած եւ յատկապէս Սարգարապատի ձակատամարտին ճակատակուած հերոսներու հոգիներուն համար:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ իր արժանավայել յարգանքը ընծայելու քաջամարտիկ հերոսներուն:

ՍՐՔՈՑ ԶԱՌԱՍՆԻՅ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՅՈՒՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Նուրից Տեմիրճեան եւ գաւակները՝ Պերճուհի, Եղիկ, Բենիկ եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Թալալ Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Խաչիկ Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Բենիամին Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Զատիկ Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Թարուհի Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Երուանդ Տեմիրճեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Տիգրան Տիշճեան եւ ընտանիք
- Գասպարեան ընտանիք
- Անթունեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ (Օճեալ՝ Կեսարիա, 1944ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 20 Մայիս 2003ին, Թուրքիոյ մէջ (Քանսահ), յետ կարճատեւ հիւանդութեան:

- Ներկայ քննուելի իբրեւ մահազոյ
- Հանգուցեալին յիշատակին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ռերբաթ, 23 Մայիս, կեսօրէ ետք ժամը 4:00ին, Նոր Մարաշի Սրբոց Զառամանց Սանկանց եկեղեցւոյ մէջ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին մօր՝ Նուրից Տեմիրճեանի բնակարանը, Ռերբաթ 23 Մայիսին, իսկ Շաբաթ 24 եւ Կիրակի 25 Մայիսին, Եղբոր՝ Զատիկ Տեմիրճեանի բնակարանը, Փոյկարպոս, Հարրի Սատրի փողոց:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները եւ Հայկական ՀՄԿԿԿ-ի հիւլառոտութիւնը տեղեկացնում են, որ 18 տարին լրացած բոլոր այն ՀՀ քաղաքացիները, որոնք բնակուած կամ ժամանակավորապէս գտնուած են Լիբանանում, Սիրիայում, ինչպէս նաեւ Յորդանանում, կարող են Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի համամասնական ընտրակարգով ընտրութիւններին մասնակցել Պէյրութում եւ Դամասկոսում տեղակայուած Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններում եւ Հայկական ՀՄԿԿԿ-ի հիւլառոտութիւնում գործող ընտրական տեղամասերում:

Դեսպանութիւններում եւ գլխաւոր հիւլառոտութիւններում հաշուառման կանգնած ՀՀ քաղաքացիները ներառուած են ՀՀ Աժ ընտրութիւնների ընտրացուցակներում, որոնց կարելի է ծանօթանալ վերոյիշեալ ներկայացուցիչներում: Այն ՀՀ քաղաքացիները, որոնց անունները բացակայում են այդ ցուցակներում, համապատասխան յայտ ներկայացնելուց յետոյ լրացուցիչ կ'ընդգրկուեն դրանցում:

Ընտրակէլու համար ընտրողները ՀՀ Աժ ընտրութիւնների օրը՝ Կիրակի, Մայիսի 25ին, առաւօտեան ժամը 8:00ից մինչեւ երեկոյեան 20:00ի ընթացքում պիտի եւ քաղաքացիական անձնագրերով ներկայանան ՀՀ դեսպանութիւններ եւ գլխաւոր հիւլառոտութիւն հետեւեալ հասցեներով՝

●ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ Հասցէ՝ 28 Տիւ Տ Ժաման, Սթայլեյ Են. (04) 41-88-60

●ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ Հասցէ՝ Մեզզէ Ծարբա, Շաֆիի փողոց 13, Դամասկոս Են. (011) 613 0952

●ՀԱՄԵՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԼԱԲՈՐ ՀԻՄՈՏՈՍՈՒԹԻՒՆ Հասցէ՝ Էլ Զավաբիի 4, Տահա Հուսէյն 12, Հայլեյ Են. (021) 268-7240

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՈՒԹԵՍԻ ՄԻԱԽՈՐԸ

Հովանաւորութեամբ՝

**ՏԻԿԻՆ ԶԱՐԻՆ ԷԼԻԱՍ ՍԸՐԻ**

Կը ներկայացնէ՝

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻՆԵՆ» ՊԱՐԱՆՈՒՄԲԵՐՈՒ ԵԼՈՅԹԸ**

Գեղարուեստական ղեկավար եւ պարուսոյց՝

**ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

ԿԱԼԱ՝ Շաբաթ, 24 Մայիս 2003, երեկոյեան ժամը 8:30ին:

«MONNOT» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԵՉ

Sponsored by: **BYBLOS BANK SAL**  
A BANK FOR LIFE

### ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՉ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՍԱՐԳՍԻԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԵՐՈՒՆ

Կիրակի, 25 Մայիսին, Հայաստանի Անկախութեան (1918) տարեդարձին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ՝

**ԳԵՐՇ. Տ. ԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՍԵՂԵԱՆ**

Յաւարտ Ս. պատարագի, հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի Հայաստանի Անկախութեան համար գոհուած ու յատկապէս Սարգարապատի ձակատամարտին ճակատակուած հերոսներու հոգիներուն համար:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին եւ իր արժանավայել յարգանքը ընծայելու քաջամարտիկ հերոսներուն:

ԴԻԿԱՆ ՎԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ՇՈՒԿԱՆԵՐՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երկ «Ֆենիսիս» պանդոկին մեջ բացումը կատարեց արաբական շուկաներում և ներդրումներում հինգերորդ խորհրդածոլովին, որում ներկայ գտնուեցան Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա, նախկին վարչապետ Սեյիմ Հըս, մեծ թիով նախարարներ և արաբ բարձրաստիճան պաշտօնատարներ և առևտրականներ:

Վարչապետ Հարիրի իր խօսքին մեջ հաստատեց, որ արաբներն ու իսլամները դեմ են ահաբեկչության և պայքար են անում դեմ նրան:

Վարչապետ Հարիրի իր խօսքին մեջ հաստատեց, որ արաբներն ու իսլամները դեմ են ահաբեկչության և պայքար են անում դեմ նրան:

Վարչապետը յուր յայտնեց, որ շուտով վերջ կը տրուի Իրաքի բռնագրավման և կը ստեղծուի Իրաքեան անկախ կառավարություն մը:

Ան նկատել տուաւ, որ ամերիկեան արտադրութիւններուն

առջև լիբանանեան շուկան բաց ձգելու դրութիւնը կը ստեղծէ մրցակցութիւն մը Եւրոպական Միութեան և Միացեալ Նահանգներուն միջև:


Իրենց կարգին, խօսք առին Մուսա, էլեւնուտքի նախարար Ֆուատ Սինիորա և Կեդրոնական Գրաստան կառավարիչ Ռիատ Սալամէ, ինչպէս նաեւ խորհրդածոլովին մասնակցող տնտեսագետներ, առևտրականներ ու բարձրաստիճան պաշտօնատարներ:

### ՎԵՐԱՓՈՒ ԸԱՅՐԱՊԵՏՈՒ ՄԵԿՆԵՑԱԻ ԺՆՆԵՐ

Երէկ առաւօտ՝ Հինգշաբթի, 22 Մայիս 2003ին, Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոս մեկնեցաւ Ժընև, միջեկեղեցական առաքելութեամբ: Վեհափառ Հայրապետը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կեդրոնատեղիին մէջ պիտի նախագահէ դիւանի եւ այլ մարմիններու ժողովներուն:

Վեհափառ Հայրապետը Հինգ օր ետք Մայրավանք պիտի վերադառնայ:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԵ» ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵԼՈՅԹՆԵՐԸ ՍԿՍԱՆ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ



Համազգայինի «Քնար» եւ «Գայիանէ» պարախումբերու ելույթներու շարքը մեծ խանդավառութեամբ սկսաւ երէկ, «Մոնո» թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ

Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան: Պարուսոյց Ֆելիքս Յարութիւնեանի ղեկավարութեամբ խումբերը մատուցեցին ճոխ եւ լախնամուտ յայտագիր մը:

Ամբողջական թղթակցութեամբ անշուշտ կ'անդրադառնանք հետագային: Ելույթներու կայան տեղի կ'ունենայ վաղը՝ Շաբաթ գիշեր: Ելույթները կը շարունակուին այսօր՝ 23, Կիրակի 25 եւ 30էն 31 Մայիսին:

Վերջին ելույթը՝ 1 Յունիսին:

**ԸՆՈՐԸԱԿԱԼԻԷ**

Անտոնեան ընտանիք շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց մօր՝ ՎԱՐԴՈՒՇԻ ԱՆՏՈՆԵԱՆԻ մահուան սուգին:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնները ու Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը տեղեկացնում են, որ Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը 2003-2004 ուսումնական տարում սփիւռքահայ դիմորդների նպատակային ընդունելութեան համար պետական պատւերի շրջանակներում յատկացրել է բուհական 70 եւ ասպիրանտական 10 տեղ:

«Հայաստանի Հանրապետութիւնում օտարերկրեայ քաղաքացիների կրթութեան կազմակերպման մասին» կարգի համաձայն ընդունելութիւնն իրականացուելու է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարի կողմից ստեղծուող ցանձմածոլովի միջոցով՝ դիմորդների կողմից ներկայացուած փաստաթղթերի քննարկման միջոցով: Նշենք նաեւ, որ առաւելութիւնը տրուելու է հայագիտական, մանկավարժական եւ արուեստի մասնագիտութիւններին:

- Համաձայն վերոնշեալ կարգի, պետական պատուերի տեղերից զատ, սփիւռքահայ դիմորդները հնարաւորութիւն ունեն ընդունուելու նաեւ պետական միջին մասնագիտական եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների, այդ թուում ասպիրանտուրայի, վճարովի համակարգ: Դիմորդներից պահանջուում են հետեւեալ փաստաթղթերը.
1. Դիմում ՀՀ ԿԳ. նախարարի անունով, որում պետք է նշուած լինի ընտրած բուհը կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւնը եւ մասնագիտութիւնը,
  2. Անձնագրի պատճեն,
  3. Ծննդեան վկայականի պատճեն՝ հայերէն թարգմանութեամբ եւ նոտարի կողմից հաստատուած,
  4. Կրթութեան վկայականի պատճեն՝ հայերէն թարգմանութեամբ եւ նոտարի կողմից հաստատուած՝ նշելով ուսումնասիրած առարկաները եւ յանձնած քննութիւնները,
  5. Տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին,
  6. Տեղեկանք ԶԻԱՇԻ (AIDS) վերաբերեալ,
  7. Լուսանկար (4x5 սմ. չափսի՝ 6 հատ):

Ասպիրանտուրա ընդունուել ցանկացողները լրացուցիչ ներկայացնում են ռեֆերատ կամ հրատարակուած աշխատութիւնների ցանկը՝ նշելով հրատարակման ամսաթիւը եւ վայրը, 2-3 հրատարակումների պատճեն:

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարի անունով դիմում - հարցաթերթիկին եւ Հայաստանում բուհական ու ԿԳ նախարարութեան միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում ուսուցանուող մասնագիտութիւնների ցանկերին (վճարովի համակարգում ուսման վարձի չափին նշումով) կարող է ծանօթանալ Պէյրութում, Դամասկոսում եւ Հալէպում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններում եւ հիւպատոսական հիմնարկում:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է ս. թ. Օգոստոսի 10ը:

Լրացուցիչ այլ տեղեկութիւններ կարելի է ստանալ՝ [www.edu.am](http://www.edu.am) ինքնբերային էջում:

- ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԸՆԱՍՍԱՆԻ ԴԵՊՈՒՆՏԻՒՄ  
Հասցէ՝ 28 Ռի Տէ Ժամսէն, Սթայլէպ: Դեմ. 04-418860
  - ՍԻՐԻԱՅՈՒՄ ԸՆԱՍՍԱՆԻ ԴԵՊՈՒՆՏԻՒՄ  
Հասցէ՝ Մեզզէ Ծարթիա, Ծաֆիի փողոց 13, Դամասկոս: Դեմ. 011-613-0952
  - ՇԱԼԵՊՈՒՄ ԸՆԱՍՍԱՆԻ ԳԼԽԱՌՐ ԸԻՄՈՍՈՒԹԻՒՆ  
Հասցէ՝ Էլ Զափաքիի 4, Տահա Շիւէյն 12, Հալէպ: Դեմ. 021-268-7240:
- ԸՆԱՍՍԱՆԻ ԴԵՊՈՒՆՏԻՒՄ

**«ԵՐԿԻՐ»**

ՄԱՅԻՍ 23-29

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

- Ընդ ընկերները չեն դաւաճանելու էջ 1
- Ժողովրդի մէջ ժողովրդի բուռն էջ 5
- Փակուղի՝ «Օրբետայում» էջ 6
- Կեղծիքների իմիտացիա էջ 9
- Մշակոյթն էլի անտէր էջ 11

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԼԱՅՈՐՈՒՄ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- Ժամը 8:30  
Լիբանանեան մամուլի խորհրդիներու ընթերցում՝ արաբերէն
- Ժամը 8:45  
«Աստղեր»
- Ժամը 11:30  
Լիբանանեան մամուլի խորհրդիներու ընթերցում՝ հայերէն
- Ժամը 12:00  
«Մարդը պահենք հայերէն»
- Ժամը 3:00  
Արաբերէն յայտագիր. հարցազրոյց
- Ժամը 5:00  
«Գրական Ցոլեր»
- Ժամը 6:00  
«Հայ երգչախոր»
- Ժամը 7:00  
«Հայկական ռոք երաժշտութիւն»
- Ժամը 8:00  
«Հարցամարտ»

25 ՄԱՅԻՍԻ ՀԱՐԱԻ ԱԶՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՑՈՎ

**«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԵՆ ԸԱՐՅԱԶՐՈՅՑ**

ԸՐԶՊԱԼԼԱՅԻ «ԸՆԴԱՏԱՐՍՈՒԹԻՒՆ՝ ԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆ» ՊԼՈՔԻ ՆԱԽԱԳԱՇ

**ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՍՈՒՄԱՏԵ ՈԱՍՏԻ ՇԵՏ**

Հարցազրոյցը պիտի ձայնասփռուի Երկուշաբթի, 26 Մայիս 2003, կեսօրէ ետք ժամը 3:00ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ԵՐԳԱՇԱՆԴԵՍ**

Կատարողութեամբ՝ հայրենի երգչուհիներ **ԶԱՐՈՒՇԻ ՊԱՊԱՅԵԱՆԻ ԿԱՐԴՈՒՇԻ ԿԱՐԴԱՆԵԱՆԻ**

Զորքը շաբթի, 4 Յունիս 2003, երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՍԱԿ՝ 15.000 եւ 10.000 Լ. Ո.

● Տոմսերը կը վաճառուին՝ Համազգայինի գրախանութ, «Շաղոյեան» կեդրոն՝ Պուրճ Համուտ, «Տիւրքի ճեպ»՝ Պուրճ Համուտ, «ՕՅԵԼԻՃ» գրախանութ՝ Անթիպիս եւ Համազգայինի «Լ. Ծանօ» կեդրոն:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահութեամբ՝ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ** (Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի) Կը ներկայացնէ՝


**ԶԱՔԱՐ ԲԵԺԻՇԵԱՆ (շուի, թաւ շուի) ՍԱՐԻԱ ԵՍԱՅԵԱՆ (դաշնակ)**

Երեքշաբթի, 27 Մայիս 2003, երեկոյեան ժամը 8:30ին, «Մոնո» սրահին մէջ:

ՍԱԿ՝ 20.000 եւ 10.000 Լ. Ո.

● Տոմսերը ստանալ Ազգային առաջնորդարանէն, Ազգային վարժարաններէն, «Նարեկացի» եւ «Համազգային» գրախանութներէն:

### ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Վարժարանի տնօրէնուհին, դրամատան տնօրէնուհի Կարգեատրուող աշակերտը

Վերջերս, տարբեր հանգրուաններով, Լիբանանի նահանգներում մէջ տեղի ունեցաւ «Պիպոս» դրամատան կազմակերպած «Այ Աուայ» աշակերտական մրցաշարքը, որ հովանաւորուած էր կրթութեան նախարար Դասսան Սալամէի կողմէ:

Նախքան մրցաշարքը «Պիպոս» դրամատան պատասխանատուները դպրոցներու ներկայացուցիչները հրաւիրած էին մամուլի ասուլիսի մը, որում ընթացքին բացատրեցին մրցանքին պայմաններն ու ընթացքը:

Անհատական եւ գրաւոր այս մրցանքը, մօտաւորապէս 50 արաբերէն հարցումներով, կ'ընդգրկէր Լիբանանի պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, հնութիւններու, կենսոլորտի, առածներու, ինչպէս նաեւ ուսողութեան մասին հարցումներ:

Պէյրութի նահանգին մրցանքը տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Մայիս 2003ին, Լիւէ Ապտ Էլ Քատէր դպրոցին մէջ: Անհատական թէ պետական դպրոցներու կողմից Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանը մասնակցեցաւ երկրորդական կարգի հինգ աշակերտներով:

Երկու օր ետք տնօրէնութեան իմաց տրուեցաւ, որ Անդո Քէչէճեան (11րդ դասարան) եւ այլ աշակերտ մը հաւասար կէտեր ապահոված են եւ հարկ էր անգամ մը եւս կրկնել մրցանքը: Երեքշաբթի, 6 Մայիսին, Անդո Քէչէճեան երկու անգամ մրցելով այդ աշակերտին հետ՝ ապահոված է բարձրագոյն միջինը, հանդիսանալով Պէյրութ նահանգին առաջինը:

Իբրեւ պարգէս, Անդո Քէչէճեան ստացաւ «Պիպոս» դրամատան կողմէ տրամադրուած երեք հապարամ. տոլար:

Յիշեցնենք, թէ մրցանքը իր աւարտին պիտի հասնի Սեպտեմբերին, երբ Լիբանանի բոլոր նահանգներու առաջնակարգ դիրքերը գրաւած աշակերտները պիտի մրցին իրարու դէմ: Լիբանանի տարածքին առաջին հանդիսացող աշակերտը այդ հանգրքուանին պիտի պարգեւատրուի տասը հապարամ. տոլարով:

Կը շնորհաւորենք հայկական վարժարանին իր մասնակցութիւնը բերող եւ առաջին հանդիսացող Անդո Քէչէճեանը, իր ծնողքը եւ ուսուցիչները:

«Նռատեսիլի կայաններն ու արաբական մամուլը անդրադարձած էին նշեալ յաղթանակին:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԸՆԱՍՍԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՆԵՑԱՍԻՐԱՅ ԵՐԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆ

**ԸՐԱԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ**

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ / ԶՐՈՅՑ

Լիւթ՝

**«ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ»**

Լիւթը կը ներկայացնէ՝

**ՀՈԳՇ. Տ. ԳԵՂԱՐԴ ԱՐԴ. ՔԻՒՄՊԷԿԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս 2003ի երեկոյեան ժամը ճիշդ 8:00ին, միութեան առօրտեղիին մէջ, կեդրոն (ԱՖԵՏԻ շէնքին ետեւ):

ԸՐԱԷՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝ **ՆԻԿՈԼ ԱԴԲԱԼԵԱՆ՝ ՄԱՍՆԱՅԻՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Մասնակցութեամբ՝ **ԸՆԱՍՍԱՆԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՓԱՌԱՍՏՈՆ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 25 Մայիս 2003, առաւօտեան ժամը 11:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, Պուրճ Համուտ:

ԸՐԱԷՐ



# ՇԱՅ ԴԱՏ

# ՇԱՅ ԴԱՏ

## ԳԵՐՄԱՆԻՈՅ, ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԽԱՆՅ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԶԱՅՐԱՅԱԾ ԵՆ ԱԶՐՊԷՅԾԱՆԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԱՐՇԱԻԷՆ

Պատանդներու փնտառութեամբ զբաղող միջազգային աշխատանքային խմբակը վերջերս բողոք ներկայացուցած է Հարաբարդէն մարդկային իրաւանց պաշտպանի մը դէմ ազդեցիկ յանձնարար կատարել ծառայութիւններու յարձակումին պատճառով:

Միջազգային կազմակերպութիւնը շատ խիստ կերպով քննադատած է Ազրպէյճանի խնդրաշարժը արշաւը, որուն նպատակն էր վարկարեկէ պատերազմական գերիներուն եւ պատանդներուն փոխանակման հարցին շուրջ տեղի ունեցած բանակցութիւնները: Ապրիլի վերջաւորութեան Ազրպէյճանի ազգային անվտանգութեան նախարարութիւնը հրապարակած էր Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի այն քաղաքացիներու անուններուն շանկը, որոնք իբր թէ մասնագետներ են հին ազգերի գերիներու խոչնդովումներուն եւ սպանութիւններուն: Այդ ցանկին մէջ ներառուած էր նաեւ պատանդներ փնտառելու միջազգային աշխատանքային խմբակի դարբարդեան համակարգող Ալպէրթ Ոսկանեանի անունը:

Յատկանշական է, որ ազրպէյճանական յատուկ ծառայութիւնները քարոզչական այս քայլին նախաձեռնած էին միջազգային աշխատանքային խմբակի անդամներուն Ստեփանակերտ այցելութեան օրը նշնք, որ այս այցելութեան ընթացքին անոնք հանդիպումներ ունեցած էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարին եւ պետական այլ կառույցներու ղեկավարներուն հետ: Հարկ է նշել, որ Ալպէրթ Ոսկանեան նախապէս քանի մը անգամ այցելած է Պաքու՝ իբրեւ պատերազմական գերիներ փնտառելու յանձնարարութիւններու ղեկավար, մասնակցած է պաշտօնական անձերու հետ հանդիպումներուն, եւ ոչ ոք այդ գծով զժողովութիւններու կազմակերպչած է: Այս կէտին անդարձաբարձապէս Պաքուի գրեթէ բոլոր թերթերը: Իրենց գործընկերոջ հանդէպ կեղտոտ յարձակումները դատաւարտեցին միջազգային աշխատանքային խումբի նախագահներ Պեռուս Քլայզէն, Սվեթլանա Կանուշինա եւ Փաթա Ջաբրէիլովի, որոնք վերջերս Պաքու այցելեցին իրենց բողոք արտայայտելու համար: Աշխատանքային խմբակին նախագահները ծանօթացան ազրպէյճանական յատուկ ծառայութիւններու տրամադրած նիւթերուն, որոնք իբր թէ կը «վկայեն» ազգերի գերիներուն նկատմամբ դարբարդի մարդկային իրաւունքներու պաշտպանին կոպիտ վերաբերմունքին մասին: Այսօր կը վերաբերի 1992-1994 թուականներուն, երբ Ոսկանեան պատերազմական գերիներու, պատանդներու եւ անյայտ կորածներու հարցերով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական յանձնարարութիւնի ղեկավարի տեղակալն էր: «Փաստաթուղթեր»ը ուսումնասիրելէ ետք նախագահները յանգեցան այն եզրակացութեան, որ մեղադրանքները անհիմն են: Անոնք նշեցին, որ ենթադրեալ խոչնդովումներուն մասին բոլոր վկայութիւնները ունին «երկրորդական բնոյթ եւ հիմնուած են երրորդ դէմքերու պատմութիւններուն վրայ միայն»: Այդ պատճառով անոնք չեն կրնար իբրեւ հիմք ծառայել նկատարեւելի գործողութիւններու մասնակցելու գծով Ոսկանեանին դէմ ուղղուած մեղադրանքներուն:

«Ալպէրթ Ոսկանեանին պաշտօն տալու համար Միջազգային աշխատանքային խմբակը հաշուի առած է անոր հետ շփումներու հինգ տարուան իր փորձառութիւնը, ինչպէս նաեւ՝ իրեն հետ աշխատելու Ազրպէյճանի ազգային անվտանգութեան նախարարութեան պատրաստակամութիւնը: Երբ մենք նախարարութեան յայտնեցինք Ոսկանեանին հետ համագործակցելու մեր որոշումին մասին, ան իբրեւ պատասխան ըսաւ, որ Ոսկանեանի օրով ազգերի գերիներուն վիճակը գոհացուցիչ էր», նշեցին նախագահները իրենց յայտարարութեան մէջ: Միջազգային աշխատանքային խմբակին ղեկավարները յիշեցուցին, որ՝ «Ալպէրթ Ոսկանեան իբրեւ Միջազգային աշխատանքային խմբակի ներկայացուցիչ երկու անգամ այցելած է Պաքու եւ համագործակցած է պատերազմական գերիներու եւ պատանդներու փնտառութիւնը Ազրպէյճանի պետական յանձնարարութիւնի աշխատակիցներուն հետ»:

Սվեթլանա Կանուշինա իր գալուցիւթը յայտնեց Ազրպէյճանի յատուկ ծառայութիւններուն նկատմամբ, որոնք Ոսկանեանը յանցագործ կոչած են եւ անոր նկատմամբ հրատարակած են թերթերու մէջ: «Այս մէկը Ոսկանեանին համար բաւական փտանգաւոր է, որովհետեւ արմատական մարդիկ գրեթէ տեսնելէ ետք կրնան ճաննալ պաշտպանի: Միեւնոյն ժամանակ Կանուշինա յիշեցուցաւ, որ՝ «միայն դատարանը իրաւունք ունի մէկը յանցագործ կոչել»: Մարդ կային իրաւանց դարբարդի պաշտպանին՝ դէմ սկսած Ազրպէյճանի բարոյաբանի պատեանքներուն մասին խօսելով՝ նախագահները Ազրպէյճանի նախնախնորներուն յայտնեցին, որ՝ «Միջազգային աշխատանքային խմբակը մտադիր չէ հրաժարելու Ալպէրթ Ոսկանեանին հետ համագործակցութեան»: «Մեզի համար աւելի կարեւոր է անյայտ կորածներ փնտառել եւ գերիներ ազատել, քան՝ քարոզչութեամբ զբաղել», յայտնեցին նախագահները:

ՓԵՆ ԱՐՄԵՆԻԷՆ ԿԱՅՔ

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵԿՎԻԻՏԻՄԵՆ**  
«Ազգային» մէջ ազգային կամ առևտրական ծանուցումներ հրատարակելի փափակները կը հնդրուի ծանուցումից պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ Անրապետական «Ազգային» ծանուցումներու գրասենյակը:

# ԹԻՔԱԿԱՆ ՌԻՎՅՈՒՄՆԵՐ, ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆ ԵՒ... ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԷԼԵՔՏՐԱԿԱՆ ԿԱՌԱՋԱՐԿԵ ՀԱՅՎԱԿԱՆ «ՊՆԳՈՒՄՆԵՐ»ՈՒՆ ԴԵՄ ԹԱՆԳԱՐԱՆ ՄԸ ՀԻՄՆԵԼ

Թուրքիոյ ժողովուրդի Հանրապետական կուսակցութեան պատկանող եւ թրքական խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնարարութիւնի անդամ Շիւքրիւ էլբէքալը վերջերս «Թրքիւ Տէյի Նիուզ» օրաթերթին հետ կատարած հարցազրույցի մը ընթացքին դիտել տուած է, թէ թուրքիա պէտք է Ուաշինկթընի մէջ հիմնէ «Անատոլի մշակութիւն եւ քաղաքակրթութիւններու թանգարան» մը՝ իրբեւ հակազդեցութիւն քաղաքին մէջ հայերու նախաձեռնութեամբ կառուցուող «Հայկական Յեղասպանութեան թանգարան»ին: Էլբէքալը, որ այս առաջարկը ներկայացուցած է նաեւ խորհրդարանին, նշած է, որ թանգարանին նպատակը պիտի ըլլայ թուրքիոյ անունը բարձրացնել եւ անուղղակի ձեւով հայկական «պնդումներ» ժխտել: Ան յայտնած է, որ թանգարանին հիմնական նիւթերը պիտի կազմեն թրքական արուեստը, մշակույթը եւ քաղաքակրթութիւնը: Էլբէքալը դիտել տուած է, որ թանգարանին մէջ պէտք է աւել տեսնել նաեւ կրօնական տարբեր հաւատքներու նկատմամբ Օսմանեան կայսրութեան «Հանդուրժողութեան» մասին նիւթեր: Էլբէքալը համոզուած յայտնած է, որ թէ՛ Ֆինանսաւորումի միջոցներ ապահովուին, թէ՛ անդարանը կրնայ դիւրութեամբ կառուցուի: Ան նշած է, որ թուրքիոյ մէջ հիմնարկ մը պէտք է ստեղծուի՝ գործադրելու համար թանգարանին ծրարը: Էլբէքալը խօսած է նաեւ Ուաշինկթընի մէջ կառուցուող «Հայկական Յեղասպանութեան թանգարան»ին մասին, եւ դիտել տուած՝ որ ան ամերիկացի ժողովուրդը պիտի հակադրէ թուրքիոյ դէմ: Ան նշած է, որ Միացեալ Նահանգներու մէջ կատարուած վիճակագրութիւններ ցոյց տուած են, թէ հակառակ թուրքիա - Միացեալ Նահանգներ դաշնակցութեան, Միացեալ Նահանգներու Հանրային կարծիքը նախապաշարուած է թուրքիոյ դէմ: Ան այս մէկը վերագրած է թուրքիոյ դէմ յայտնուած, կիպարցիներու եւ հայերու կատարած արշաւին: «Յատակ է, որ Յեղասպանութեան թանգարանի մը բացումը աւելի պիտի վնասէ Միացեալ Նահանգներու մէջ թուրքիոյ պատկերին եւ ժխտական ազդեցութիւն պիտի ունենայ երկկողմանի յարաբերութիւններուն վրայ», ըսած է Էլբէքալը:

Հետաքրքրանքն է, որ «Թրքիւ Տէյի Նիուզ»ին մէջ լոյս տեսած հարցազրույցին մէջ գործածուած է «ցեղասպանութիւն» բառը: Հետագային, օրաթերթը «ճշգրտում» կատարեց այս գծով՝ դիտել տալով, որ «ցեղասպանութիւն» բառը սխալ ձեւով գործածուած էր եւ փոխարէնը պէտք է «ջարգել» ըսուէր: Թերթը ներդուլութիւն խնդրեց վրիպումին համար: «Դէպքը, որ կը փորձուի իբրեւ «ցեղասպանութիւն» ներկայացուի, կարելի չէ գտնողել այս պատմական մէջ, որովհետեւ Օսմանեան կայսրութիւնը երբեք չէ որոշած կամ ծրարած հայերուն դէմ հետեւողական ջարդեր կատարել կամ գանոնք քննել», գրած է թերթը:

## ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԵ «ՋՐԳՈՒՄ» ԹՈՒՐԻՔԵՐՈՒ ԶԱՆԳՈՒՄԾԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ...

«Անատոլու» լրատու գործակալութիւնը 17 Մայիսին հաղորդեց, որ Իզմիրի Արեւելեան շրջանին մէջ գտնուած են 1919ին հայերու կողմէ «ջարգուած» թուրքերու գանգուածային գերեզմաններ: Գործակալութիւնը յայտնեց, որ գերեզմաններուն բացումը տեղի պիտի ունենայ 27 Մայիսին՝ տարբեր երկիրներէ եկած գիտնականներու ներկայութեամբ: «Թրքական Պատմութեան Հիմնարկ»ի նախագահ ղոկտ. Եու-

«Մարմարա» օրաթերթը վերջերս թրքական «Ռատիբալ» օրաթերթին թարգմանաբար արտասպէս Հայկական Յեղասպանութիւնը ձանջող թուրք հանրաժանօք գիտնական Թանը Աբլաքի մէկ յօդուածը, որուն մէջ ան կ'անդրադառնայ Յեղասպանութեան վերաբերելու նախապէս լոյս տեսած այլ յօդուածի մը՝ պատասխանելով անոր մէջ տեղ գտած թրքական պաշտօնական թեզերուն: Ստորեւ կը ներկայացնենք Աբլաքի յօդուածը՝ ամբողջութեամբ:

29 Ապրիլին Այլէ Հիւր ստորագրութեամբ, հրատարակուեցաւ «Հայկական Հարց»ի նուիրուած յօդուած մը, որուն խորհրդի մէջ էր «Պատրա՛ստ ենք պատմութեան հետ երես առ երես գալու»: Յօդուածը, թուրքիոյ մէջ հազարէ մտնող ցուցաբերուած սրտաքննութեամբ, կը խօսէր պատմութեան հետ հաշուեյարդար կատարելու եւ նիւթը բացէ իրաց րանափէճի հարց տուութեան մասին: Միայն Սիւրիոյ մէջ կարգ մը «քեր-քեր» կաղաքումներ կատարուին: Այդ յօդուածին մէջ ալ իբրեւ տեղեկութիւն, հրամայուած են բազմաթիւ նիւթեր, որոնք ծանօթ են իբրեւ թրքական պաշտօնական թէզ եւ որոնք այնպիսի առասպելներ են, որոնք արեւելեան պատմութեան հետ որեւէ կապ չունին: Իրականութիւնն այն է, որ թրքական տեսակէտները

ը փաստելու նպատակով հիմնուած կարգ մը մարտարակուեցաւ «Հայկական Հարց»ի նուիրուած յօդուած մը, որուն խորհրդի մէջ էր «Պատրա՛ստ ենք պատմութեան հետ երես առ երես գալու»: Յօդուածը, թուրքիոյ մէջ հազարէ մտնող ցուցաբերուած սրտաքննութեամբ, կը խօսէր պատմութեան հետ հաշուեյարդար կատարելու եւ նիւթը բացէ իրաց րանափէճի հարց տուութեան մասին: Միայն Սիւրիոյ մէջ կարգ մը «քեր-քեր» կաղաքումներ կատարուին: Այդ յօդուածին մէջ ալ իբրեւ տեղեկութիւն, հրամայուած են բազմաթիւ նիւթեր, որոնք ծանօթ են իբրեւ թրքական պատմութեան հետ որեւէ կապ չունին: Իրականութիւնն այն է, որ թրքական տեսակէտները

մըն է պարզապէս, որքան որ գիտեմ, առաջին անգամ տեղ գտաւ Քեամրան Կիւրիւնի «Հայկական թղթածրար» անուն գիրքին մէջ: Անկէ վերջ ուրիշներու կողմէ շարունակ գործածուեցաւ որպէս լուրջ տեղեկութիւն: Ո՛չ մէկը մտածեց հարցնել հետեւեալը. որո՞նք են յատուկութեան ենթարկուած այս 1397 անձերն ու մահապատիժի ենթարկուածները: Կիւրիւն ո՛չ մէկ անուն կու տայ եւ ո՛չ մէկ փաստաթուղթ, բայց իբրեւ արդիւր կը յիշէ Օսմանեան շրջանի ներքին նախարարութեան ծածկագիրներու գրասենեակին թղթածրարները: Այս թղթածրարները երկար ժամանակ հետազոտողներէն պարտանի պահուեցան: Զանոնք կրցան կարգաւ միայն Կիւրիւնի կամ Ս. Շոյի նման պաշտօնեաներ, որոնց պաշտօնը «ստասպել» ստեղծելու պարտաւէր էր թիւն պարտաւէրէն: Իսկ երբ այդ թղթածրարները բացուեցան, կամ այն է որ կարցան անուանուին արտօնութիւն շարուեցաւ այն պատճառարանութեամբ, թէ թղթածրարներուն վրայ աշխատանք կը

տարուէր եւ կամ թէ իրենց նիւթը այդ թղթածրարներուն հետ կապ չունէր: Այսօր, այդ թղթածրարները բացել թէ՛ եւ, գտնողը կարելի է կարող ըրէ զժողովուրդները յաղթահարելու: Իսկ այդ թղթածրարներուն բովանդակած անօթութիւնները ճիշդ հակառակն են Կիւրիւնի կողմէ պնդուածներուն: Մէջտեղը չկայ որեւէ փաստ այն մասին, թէ կարգ մը անձեր լի արտօնութեան կամ մահապատիժի ենթարկուած են հայերուն դէմ յուրի վերաբերում ցոյց տուած ըլլալու յանցանքով: Իսկ անոնք, որոնց դէմ գատ բացուած է, հայերու նկատմամբ չար գործած մարդիկ չեն, այլ հայերու սեփականութիւնները իւրացուցած անձեր: Իթիհատականները հարցաքննութիւն բացած էին սեփականութիւնները թաքցնող կարգ մը պետական պաշտօնեաներուն դէմ, որովհետեւ իթիհատականները կ'ուրիշ պատմութիւններով պատմէին իրենց անցածը: Իսկ այն անձերուն մասին, որոնք յատուկ ծառայութիւններով ծախսուած են, որովհետեւ իթիհատականները կ'ուրիշ պատմութիւններով պատմէին իրենց անցածը: Փաստաթուղթերը մեզի ցոյց կու

թեր ցոյց կու տան, թէ իթիհատականները հայերու սեփականութիւնները գործածած են հետեւեալ նպատակներուն համար: 1) Դիմագրաւել պատերազմի ծախսերը (կարգ մը չնչքեր գիտուորականներուն յատկացուեցան, գործարաններուն արտադրութիւնները գինւորներու կարիքներուն տրամադրուեցան): 2) Ստեղծել թուրքաբեռնի դասակարգ մը: 3) Տեղադրել մահմեդական գաղթականները (այս նպատակով ապաստանակայաններու ստեղծումները): 4) Հայերուն սեփականութիւնները ծախսել, որպէսզի անոնք հաստիքով պատմագրութեան հայերու տեղահանութեան ծախսերը: Թղթածրարներուն մէջ այս նիւթի շուրջ տասնեակներով փաստաթուղթեր կան, սակայն մէկ հատ իսկ փաստաթուղթ չկայ այն անձերուն մասին, որոնք յատուկ են հայերուն դէմ գործողութիւններով ծախսուած ըլլալու յանցանքով: Փաստաթուղթերը մեզի ցոյց կու

ԻԹԻԿԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՅՏԱԳԻՐԸ Կարգ մը փաստաթուղթ Ծար.ը՝ էջ 10



# Նրախի Պատերազմի Կոմիտեի Պատմական Հարցադրերը

## «ՄԵՐ ԼՍԱԾԻՆ 90 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԱՂԲ ԷՐ»

ՆԱԽԱԳԱԿ ԱՍՏՏԱՄ ԴԻՄԵՅՆԻ  
ԱՐՁԱՆԻՆ ԴԵՄԵՐ ԱՍԵՐԻԿԵԱՆ  
ԴՐՕԶԱԿՈՎ ԾԱԵԿԵԼՈՒ ԱՐԱՐԵՐ  
ԿԱՆՆԱՍՏԱՆՈՒԱԾ ԷՐ ԵՎ ԿԵ ՄԻՏԵՐ  
ԾԱՌԱՅԵԼ ՆԱԽԱԳԱԿԱԿԱՆ  
ՎԵՐՆՏՐԱԿԱՆ ԱՐՁԱԻԻ ՄԵՐ:  
ԱՍԵՐԻԿԱԳՅԻ ԶԵՆԱԴՈՏ ՄԵՐ ԿԵ  
ԴԱՏԱՊԱՐՏԵ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ:  
ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱՌՈՒՄՆԵՐՈՒ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶԱՐՈՉՈՒԹՅՈՒՆԸ  
ԾԵՓՈՐԵԼՈՒՆ ԸԱՍԱՐ:  
«ՈՒՅԹՈՐՁ» ԿԵ ՄԱՆՐԱՄԱՍՆԵ:

**Ի**րաքի դժամ պատերազմին ամենին հուշահավերժոր նկարներին է անիկա. Պայտառաբի մէջ՝ ամերիկացի զինուոր մը կը բարձրանայ Սատտամ Հիւսեյնի արձանին վրայ եւ ամերիկեան դրօշակը կը փաթթէ տապալած բռնաձեռքին սեւ մետաղէ դժմքին:

Սակայն «Հարիւրի» թերթի հրատարակիչ ձոն Մաքարթըրի համար Միացեալ Նահանգներու զինուորական յաղթանակի նոյն պատկերը նաեւ խորհրդանիշը դարձած է քարոզչական արշափ մը, որուն ձեւարկած է նախագահ Պուշին վարչաձեռքին:

«Ամբողջութեամբ Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշին վերնտարական արշափն ծառայելու կոչուած եւ կանխամտածուած ծանուցում մըն էր ստիկա»,- կ'ըսէ Մաքարթըր. որ ինքզինք ամերիկեան պետութեան քարոզչութիւնը քննադատող հեղինակութիւն հռչակած է: «Մի. էն. էն», «Էմ. էս. էն. Պի. Մի.» եւ «Ֆոքս» լրատու գործակալութիւնները ամբողջութեամբ կ'ոլ տուին զայն»:

Մաքարթըրը 1992ին գրեց «Սեքրետ ֆրոնթ» սենսըրշիփ եւս փրօփակսնտա ին տր Կալիֆոռնի» գիրքը, որուն քննադատութեան թիրախն է ամերիկեան պետութեան ու մամուլը, որովհետեւ անոնք հանրութեան ու շաղկաթ թխուր տարբեր ձեւերով շեղած են 1990ին իրաքի կողմէ Քուէյթ ներխուժումէն ետք, ինչպէս կ'ըսէ հեղինակը:

Մաքարթըրի համաձայն, շատ բան չէ փոխուած իրաքի վերջին պատերազմին ընթացքին, ինչ որ զինք մղած է պատրաստելու «Սեքրետ ֆրոնթ» գիրքին երկրորդ եւ այժմէականացած հրատարակութիւնը: Ամերիկեան վարչամեքենային մէջ հանրային յարաբերութիւններու մասնագէտներ տակաւին շինու պատմութիւններ կը շինեն գանձեր պետութեան շահերուն ծառայեցնելու համար, կ'ըսէ ան, եւ վարկ վայելող լրագրողներ պատրաստ են բողոքելու գանձը: «Ինքզինք ղեկավարող ամերիկեան պետութեան մը գաղափարը կ'այնպէս ակուրտ այս քարոզչութեան պատճառով,- կ'ըսէ Մաքարթըր:- Ամբողջ այն համոզումը, թէ մենք կրնանք մենք մեզ ղեկավարել եւ ունենայ խիստիկանական զենք ամառապետութեանն է կեղծիքն է, իմ կարծիքով մեռած է»:

Սպիտակ Տան բանբեր Մաքարթըրը կը ժխտէ ամերիկեան վարչամեքենային կողմէ քարոզչական որբէ արշափ մը առկայութիւնը եւ կ'ակնկալէ, որ ամերիկեան հանրային կարծիքը ծիծաղելի գտնելով նման գաղափարներ՝ մերժէ գանձը:

Փենթագոնի մէջ բանբերը եւս ժխտած է Պաղտատի մէջ նախագահ Հիւսեյնի արձանին վրայ

ամերիկեան դրօշակը գետեղելու ծրագրումը՝ բարձր մակարդակի վրայ: «Իմ կարծիքով անշուշտ շատ ինքնաբերական արարք մըն էր ատիկա», կ'ըսէ ան:

Իրօք, վերջերս հանրութեան եւ մամուլի համար ուսումնասիրութիւններ կատարող «Փիւ» կեդրոնին կողմէ կատարուած վիճակագրութեան մը համաձայն, ամերիկացիք զոհ էին իրաքի պատերազմին լրատուութեան, թէ քան շատեր նուազ լուրեր կ'ուզէին լսել հակապատերազմական արտայայտութիւններու վերաբերեալ եւ պատկերասփիւռի պատուարին վրայ կ'ուզէին տեսնել նուազ թիւով նախկին զինուորականներ կայացուցիչներ:

Սակայն Մաքարթըրը կը շեղուէ, թէ Մոցի երկու պատերազմները յատկանշուած են կասկածելի պատմութիւններով, որոնք նպատակաւորուած են խաբելու հանրութիւնը՝ ճակատագրական պահերու:

**ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ՈՒՄԵՐ**  
Մոցի պատերազմին նախօրեակին, 1991ին, ամերիկացիք պարտաւոր էին հաւատալ, թէ իրաքի զինուորները բռնէյթի մանուկներ դուրս կը նետէին հիւանդանոցներու մէջ կանխահաս նորածններու յատուկ սենեակներէն, ձգելով, որ անոնք մեռնին: Մաքարթըրը կ'ըսէ, թէ այս տեղեկութիւնը իրականութեան չէր համապատասխանէր:

Այս անգամ, կ'ըսէ ան, նախագահ Պուշին վարչամեքենան սխալ յայտարարութիւններ րըւ իրաքի կորիզային զենքերուն առնչութեամբ, Պաղտատը ամբաստանելով այլմիտի մտով անգիտները ներածելու եւ հարստացած իւրանիմ պարտաստելու յանցանքով, ահազանգ չնչեցնելով, թէ երկիրը 6 ամիսէն պիտի շինէ իր կորիզային զենքը:

«Հիւլէական ուժի միջազգային գործակալութիւնը» ի յայտ բերած է, թէ այդ խողովակները կը ծառայէին զինուորական հրթիռները պատրաստելու եւ ոչ՝ կորիզային զենքերու: Մաքարթըրը կ'ըսէ, թէ գոյութիւն չունի այս գործակալութեան կողմէ պատրաստուած եւ տարբեր բան լիաստով որբէ տեղեկագիր, սակայն Սպիտակ Տունը իրաքի զենքերուն առնչութեամբ հաստատումներ կը կատարէ այս գործակալութեան վերաբերած իր տեղեկագրիներուն հիմամբ:

«Ինչ որ փոխուած է, այն է, թէ այլեւս ուղղակի խաբելու մէջ մտած չկայ, կ'ըսէ Մաքարթըր՝ ակնարկելով Սպիտակ Տան եւ Փենթագոնի քարոզչական ուժերի արշափները:  
Միացեալ Նահանգներու լրագրութեան «Էնրօպլ» ղարգէն Մինթիա Քենարտ կ'ըսէ, թէ նախագահ Պուշին վարչամեքենան տիրապետած է հանրային համակրելի պատկերներ տեղծելու եւ իր նպատակներուն ծառայող պատգամներ ձեւաւորելու արուեստին:

«Անիկա լրագրութեան ասպիւզը տեսակ մը անդամալուծած է,- կ'ըսէ Քենարտ, որ «Մի. Պի. էս.» կայանին թղթակից է եւ տեղեկագրած է 1991ի Մոցի պատերազմը- Ասիկա փայլուն ժամանակաշրջան մըն էր դժուար հարցումներ հարցընելու եւ սեփական լրատուութիւն ընելու»:



Նախագահ Պուշին ամենն գորաւոր ունըր:

րի առաջ՝ իր միլիտառաէր մեծ հօր եւ մեծ մօր առնելը կըրող հիմնադրամէ մը յատկացումներ կատարելով:

Մինչ Մաքարթըրը լրատու գործակալութիւնները կ'ամբաստանէ ընդհանրապէս ընդդիմադիր կեցուածք չորդեգրելու յանցանքով, միւս կողմէ՝ անոր սեփական թերթը անհնայ է նախագահ Պուշին նկատմամբ եւ Մայիսի իր թիւին մէջ զայն նկարագրած է իբրեւ ղեկավար մը, որ՝ «իւր տղիութիւնը առաքիւնութիւն կը համարէ եւ իր հետաքրքրութեան պակասը կը նկատէ բարոյական ուժի ցուցանիշ»:

**ԿՐԿԵՍ**

Սակայն Մաքարթըրի նեղութիւն չի պատճառներ Ռուսիայի Մերոքի «Ֆոքս» լրատու կայանին որոտընդոտ հարեանսիրութիւնը: «Ֆոքս» շատ աւելի մեծ թիւով ակնդիրներ ունի, քան «Մի. էն. էն» եւ «Էմ. էս. էն. Պի. Մի.»:

«Այս ամէնը կը նշանակէ, թէ Մերոքը ուրբէ անձէ աւելի լաւ գիտէ կրկէս մը ղեկավարել: Պատերազմն ու քաղաքական աղմուկը միշտ լաւ շուկայ ունին: Սակայն բուն աւերը գործեց բարձր մակարդակի մամուլը,- կ'ըսէ Մաքարթըր:- Բարոզուութեան առումով՝ «Տը Նիւ Եորք Թայմզ» որբէ օրաթերթն է լրատու կազմակերպութեան աւելի պատասխանատու է պատերազմը պաշտպանում մէջ»:

Մաքարթըրը «Տը Նիւ Եորք Թայմզ» շարաթարթըր կ'ամբաստանէ նախագահ Պուշին վարչամեքենային կողմէ հրապարակուած այլմիտի մտով խողովակներու շինութեան լուրին հաւատալու պատրաստութեան: Եւ որբ նախագահ Պուշին ակնարկած էր «Հիւլէական ուժի միջազգային գործակալութեան» վերաբերած, սակայն անգոյ տեղեկագիրի մը՝ իրաքի կորիզային զենքերուն վերաբերեալ, պահպանողական «Ոււլիսի»-ն թիւն թայմզ» թերթին էր, եւ ոչ՝ «Նիւ Եորք Թայմզ» կամ «Ոււլիսի» թիւն ֆոսթըր, որ ժխտեց նման տեղեկագիրի մը գոյութիւնը, կ'ըսէ ան:

«Տը Նիւ Եորք Թայմզ» նաեւ տեղեկագրած էր իրաքի գիտնակների մը մասին, որ ամերիկացի պաշտօնատարներու քսած էր, թէ Սատտամ Հիւսեյնի փճացուցած էր քիմիական եւ կենսաբանական զենքերու կազմածները եւ կարգ մը զենքեր ուղարկած էր Սուրիա, պատերազմէն անմիջապէս առաջ:

Միակ հարցը, կ'ըսէ Մաքարթըրը, այն է, թէ «Տը Նիւ Եորք Թայմզ» չէր խօսած այս գիտնականին հետ, ոչ ալ տուած էր անոր անունը, բայց յօժարած էր ուշացումով հրատարակել լուրը, հրապարակելն առաջ զայն պետութեան ներկա-

յացնելու եւ անոր հաւանութիւնը ստանալու կամ մանրամասնութիւններ զեղչելու համար: Իրողութիւններ, զորս «Տը Նիւ Եորք Թայմզ» կը խոստովանի լուրին սկիզբը: «Կարելի է նաեւ պարզապէս պետութեան կողմէ հրապարակուած մամուլը հարողագրութեամբ մը բաւականանայ: Ուրեմն պետութիւնը թող գրէ լուրերը: Ասիկա «Փրաւտա»ի ոճն է», կ'ըսէ Մաքարթըր:

«Տը Նիւ Եորք Թայմզ»ի բանբեր Թոտի Ուսնիք կը մերժէ ընդունիլ Մաքարթըրի ամբաստանութիւնները թերթին կողմէ պատերազմին լրատուութեան վերաբերեալ: «Կը հաւատանք, թէ իրադարձութիւնը տեղեկագրած ենք ամէն դիտանկիւնէ եւ իր բոլոր երեսներով», կ'ըսէ ան:

«Ֆոքս» ոչ մէկ ձեւով հակադրած է Մաքարթըրի ակնարկներէն: Միացեալ Նահանգներու տարածքին խմբագիրներ մեծ ճիգ թափեցին խուսափելու համար պատերազմի ցնցիչ պատկերներէ, մանաւանդ՝ իրաքի մեռած քաղաքացիներու եւ սպաննուած ամերիկացիներու տեսարաններ ցուցադրել, մինչդեռ եւրոպացիք դիտարկեցին գրաքննութեան զերծ ահաւոր տեսարաններ:


Պատերազմը տեղեկագրելու համար իրաք ուղղուած լրագրողները ամերիկեան ջոկատներու կցելու փենթակոնի որոշումին արգելաբէր եղաւ այնպիսի լրատուութիւն մը, որմէ զուրկ էր 1991ի պատերազմը: Սակայն անիկա հագուողէ պօրէն բարձրացաւ այն մակարդակին, որ Մաքարթըրի չափանիշն է:

«Մեր լրագրող 90 առ հարիւրը աղբ էր: Միայն 5 կամ 10 առ հարիւրը լաւ էր», կ'ըսէ ան: Մաքարթըրը կ'ըսէ, թէ լրատուամիջոցներուն ընդթըր եւ անոնց նկատմամբ պետութեան կեցուածքը լաւագոյն արտայայտուած է պաշտպանութեան նախարար Տանըլտ Ռամսֆելտի «Թատըն Հոլը»ի հանդիպումին ընթացքին, փենթակոնի մէջ:

Երբ ներկայանէին մէկը հարց տուած է, թէ ինչ կարելի է ընել շրջելու համար պատերազմին «գեղարկուող կերպով ժխտական» լրատուութեան ընթացքը, Ռամսֆելտը պատասխանած է. «Գիտէք, հարկ է պատիժի ենթարկել այն թերթերն ու պատկերասփիւռի կայանները, որոնք լաւ խորհուրդներ չեն տար, եւ՝ վարձատրել անոնք, որոնք լաւ խորհուրդներ կու տան»:

Մաքարթըրը կ'ըսէ, թէ այս պատասխանը պէտք է թարգմանել հետեւեալ ձեւով. «Կը պատժեք քննադատները եւ կը վարձատրեք բարեկամները: Այն է պատասխանին իմաստը: Այս է Ոււլիսի թիւն լրագրութեան չափանիշը... իրականութիւնը ցոյց տալը գործնապէս հայրենասիրութեանն է»:

Սակայն փենթակոնի բանբեր Հիւլիսի կ'ըսէ, թէ Ռամսֆելտի ակնարկութիւնը չէր վերաբերեալ անպատու լրատուութեան, այլ՝ սխալ լրատուութեան: «Պաշտպանութեան նախարարութեան քաղաքականութիւնը պատիժի չ'ենթարկել լրատուամիջոցները եւ գանձեք չի վարձատրել տեղեկագրութեան ընդթիւն համաձայն, այլ՝ այն չափանիշներուն, զորս կը պահանջենք եւ կը կարծենք», թէ արհեստավարժ մօտեցումի չափանիշներն են»:



Ամերիկացի զինուորներ գիտին, թէ իրենց դիմադրող չկար հիւանդանոցն մէջ, այսուհանդերձ ամոք ցուցակաւ կռիւ մը մղեցին եւ գինեթաղի իրենց գործողութիւնը արձանագրեցին մուքն մէջ նկարող վիտեոյի գործիքներով:

Հաւատարիմ մնալով իրենց այն հաւատամքին, թէ երբեք վիրաւոր ընկեր մը պիտի չձգեն իրենց ետին»:

Ամերիկեան քաղաքականութիւնը կը ձգտէր աշխարհի պատկերասփիւռի կայաններէն յարմար պատկեր մը ցուցադրելու՝ օգտագործելով ջոկատներու հետ աշխատող լրագրողները եւ անոնց սեփական նկարահանումի գործիքներով աւանդած նկարները, իրենց վերապահելով ժապաւէնին խմբագրումը:

Փենթակոն ազդուած էր Հոլիվուտի մէջ պատրաստուած իրականութեան վրայ հիմնուած պատկերասփիւռի յայտագիրներէն եւ ոստիկանական ժապաւէններէն, մասնաւորաբար՝ «Պլէք հոք տոն»ի հեղինակ ձերի Պրոբլեմս յալմընէն: Պրոբլեմս յալմընը փենթակոնի խորհրդատուներէն էր «Փրոֆայլ ֆրամ տը ֆրոնթ լայն» պատկերասփիւռի յայտագիրներու պատրաստութեան մէջ, որ սկիզբ առաւ 2001ին, ամերիկեան զինուորներու Աֆղանիստան մուտքէն ետք: Նոյն մօտեցումը որդեգրուած եւ կատարելագործուած է իրաքի պատերազմին ընթացքին:

# ՃԵՄԻՔԱ ԼԻՆԶՐ ԱԶԱՏԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ «ԽԵՂԱԹԻՒՒՒՄԸ»

ԻՐԱՔՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ  
ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ ԱՍԵՐԻԿԱԳՅԻ  
ԶԻՆՈՒՈՐ ԺԵՄԻՔԱ ԼԻՆԶ ԿՈՒՈՔԻ  
ՎԵՐԱՆՈՒԹԵՅՄ, ԻՍԿ ԶԱՅՆ ՓՐԿԱԾ  
ԱՍԵՐԻԿԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԶՈՎԱՏՆԵՐԸ  
ԴԱՐՁԱՆ ԸԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԱՐԵՐ  
ՍԵՐ ԸՏՐՈՍՆԵՐԸ: ՍԿԱՎԱՅՆ ԱՍԻԿԱ  
ԼՐԱՏՈՒԿԱՆ ԴԵՎԱՎՈՐՈՒՄԻ ԱՄԵՆԵՆ  
ՅԼՏԻՉ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԷՐ, ՈՐ ԵՐԲԵԻԿԵՒ ԼՍԱԾ ԵՒՆԵ,  
ԿԸՍԵ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»-Ի ԹՂՈՍԿԻՅ  
ՃՈՆ ԶԱՏՆԵՐԸ՝ ԶՈՂԱԶԵՐԾԵԼՈՎ  
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԶԱՐՈՉՈՒԹԵԱՆ  
ՎԵՐՈՒՅՆԵՐԸ ԵՒ ՅԱԿԱՂԻՏԱԿԱՆ ՍՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ճեմիքա Լինզ չի յիշեր իր փրկութեան պատմութիւնը, եւ թոճկներ կը սեւն, թէ ան հաւանաբար ոչինչ պիտի յիշէ: Զայն խնամած թոճկը կ'ըսէ, թէ անոր մարմնի վրայ փամփուռէ գետերը չկային, ոչ ալ՝ դաշոյնի հարուածի վէրքեր:

Լինզ ամերիկեան բանակին մէջ 19 տարեկան գրագիր պաշտօնեայ մըն էր Ուււլսթ Վըրճինիայի Փայրօթայն քաղաքէն: Ան գերակարգուած էր, երբ անոր խումբը սխալ ճամբար մը մտած էր Նասըրիայի մուտքին եւ՝ դարանակալ յարձակումի ենթարկուած: Անոր ընկերակիցներէն 9ը սպաննուած էին եւ ինք փոխարդուած էր տեղու յայտնուող հարուածները, ուր այդ ժամանակ Սատտամ Հիւսեյնի ֆետայիները կը վիտային: 8 օր ետք ամերիկեան յատուկ ջոկատներ խուժեցին հիւանդանոց՝ «արամաթիք» իրադարձութիւնը արձանագրելով մուլթին մէջ նկարող վիտեոյի գործիքով մը:

Ըսուեցաւ, թէ անոնց վրայ կրակած էին հիւանդանոցին մէջէն եւ դուրսէն, սակայն ջոկատը յաջողած էր հասնիլ Լինզի եւ զայն արագօրէն փոխադրել ուղղաթիւում:

Տեղեկագիրներու մէջ ըսուեցաւ, թէ ան դաշոյնի հարուած մը ստացած էր, փամփուռուով վիրաւորուած էր, զայն ապուհած էին հիւանդանոցի իր անկողինին մէջ եւ հարցաքննած:

Սակայն Նասըրիայի հիւանդանոցէն բժիշկներ կ'ըսեն, թէ պատերազմին ընթացքին իրենց լաւագոյն դարմանումը մատուցած էին Լինզի: Անոր տրամադրած էին հիւանդանոցին միակ կատարելագործուած անկողինը եւ յարկի մը երկու հիւանդապահուհիներէն մէկը:

«Քննեցի զինք, տեսայ, թէ ունի կոտրած թեւ մը, փոքուն սրունք մը եւ տեղէն ելած կրունկ մը,- կ'ըսէ Հարիթ Ղուստան, այն բժիշկը, որ

խնամած է Լինզը:- Փամփուռտի հետքեր չկային, անոր մարմնին մէջ փամփուռտ չկար, դաշոյնի վէրք չկար, պատահածը ճամբու արկած մըն էր: Կ'ուզեմ աղանաղով պատկերել: Զեմ գիտեմ, թէ ինչ շահ ունին, երբ կ'ըսեն, թէ ան փամփուռտով վիրաւորուած էր»:

Ամերիկեան յատուկ ջոկատները նախքան հիւանդանոց մտնելը տեղեկ էին, թէ իրաքեան զինուորական ուժերը հետագած էին, ինչպէս ականատեսներ ըսին մեզի:

«Զարմացանք: Ինչ պէտք ունէին հիւանդանոց ներխուժելու: Զինուորները հետագած էին,- կ'ըսէ Անմար Ուտայ, բժիշկ մը, որ կը ծառայէր հիւանդանոցին մէջ:- Հոլիվուտեան ժապաւէնի պէս էր: «Կ՛, Կ՛, Կ՛» պոռացին, կրակեցին, պայթիւններ լսուեցան, ամերիկեան ցուցական յարձակում մը գործեցին հիւանդանոցին վրայ, Սլիվթըր Սթայնի եւ ձէքի Զէյնի ժապաւէններուն ոճով»:

Վերջին խեղաթիւրում մըն ալ կար. փրկարար ջոկատին ժամանումէն երկու օր առաջ Հարիթ դասաւորած էր, որ ձեւեղաց հիւանդատար ինքնաշարժի մը միջոցով յանձնուէր ամերիկացիներուն: Սակայն, մինչ ձեւեղաց Լինզը փոխադրող հիւանդատար ինքնաշարժը կը մօտենար ամերիկեան բանակին մէջ անցարգելին, կրակ բացուեցաւ անոր վրայ, եւ ինքնաշարժը ստիպուեցաւ հիւանդանոց վերադառնալ: Ամերիկացիք գրեթէ պիտի սպաննէին իրենց փայփայած գիւնորը:

Երբ փրկութեան պատմութիւնն ու ժապաւէնները հրատարակուեցան, Տոնայի մէջ ամերիկեան բանակի բանբեր Վինսենթ Պրոբլեմս յայտարարեց. «Կարգ մը քաջարի զինուորներ իրենց կեանքը կը վտանգեն նման բաներ իրականացնելու համար,





